



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 27 ԱՊՐԻԼ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստագրութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստագրութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ զիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 9

ԳՈՂՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամբողջ սրտովս գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէր,
եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուեմ:
Քեզմով պիտի ուրախանամ ու ցնձամ,
եւ ներբողեմ քու անունդ, ո՛վ Բարձրեալ:
Հեթանոսները յանդիմանեցիր,
ամբարիշտը կորուստի մատնեցիր, եւ անոնց անունը յաւետ ջնջեցիր:
Բայց Տէրը կայ ու կը մնայ յաւիտեան:
Ան իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանի:
Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը,
ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն:
Տէրը ինք ապաւեն պիտի ըլլայ անիրաւուածին,
ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն:
Անոնք որ քեզ կը ճանչնան, ո՛վ Տէր, քեզի պիտի վստահին,
որովհետեւ դուն չես լքեր անոնք որոնք քեզի կը դիմեն:
Ել, ով Տէր, ազգերը քու դատաստանիդ ենթարկէ,
մարդը ինքզինք ամենազօր թող չկարծէ:
Քու երկիւղդ պարտադրէ անոնց, ո՛վ Տէր,
թող ազգերը գիտնան թէ իրենք մարդ են պարզապէս:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈՐՔ

*Պահապան ամեն այնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ԵԼԻՅ ԻԱ (21) – ԻԲ (22) ԳԼՈՒԽ



ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ (21:28-36)

Շարք մը պապուիրաններ, որոնք կարծէք այսօրուան մարդուն ըսելիք կրնան չունենալ: Պապուիրաններ, որոնք այնքան մանրամասնութեամբ ներկայացուած են, որ կարծէք միայն յարուկ ըլլային անցեալի մարդուն, ու անցեալի ընկերութեան: Բայց այս բոլորի նպատակը, վերջ ի վերջոյ, որպէսզի մարդը ապրի այնպիսի գոյությունամբ, ու մանաւանդ, եթէ պարահեցաւ որեւէ դէպք, այդ դէպքը լուծուի ու հարուցուի ամենայն արդարութեամբ, ինչ որ այսօրուան աշխարհին պակսող ամենակարեւոր երեւոյթն է: Ուրեմն, Աստուած այս պապուիրաններով կ'ուզէ որ արդարութեամբ հարուցուին:

Այս պապուիրաններու շարքին նաեւ այն կարեւոր երեսը ինչ որ կը վերաբերի ծառաներուն կամ սպրուկներուն: Այս բոլորի մէջ կը տեսնենք, որ Աստուած հանգրուանաբար աւելի արժէք կու տայ անոնց: Անոր համար ալ տրեւոր որքան գոյջ պէտք է ըլլան իրենց ծառաներուն նկատմամբ, որպէսզի յանկարծ անոնց մահուամբ իրենց կեանքը չվրանգուի: Կարծէք այն աստիճանի, որ մարդիկ պիտի նախընտրէին ծառայ կամ սպրուկ չունենալ:

ՀԱՏՈՒՅՄԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ (22:1-31)

Այս գլուխին մէջ կարգ մը օրէնքներ, որոնք պարագայականօրէն իրարու քով չեն եկած, այլ տրամաբանական շարքով: Օրէնքներ են, որոնք խումբերու կարելի է բաժնել, որովհետեւ իրարու հետ առնչութիւն ունին: Օրինակ. 1-15 հմր գողութեան մասին: 16-31 հմր բարոյական եւ կրօնական օրէնքներ են: 18-20 հմր հեթանոսական կրօնքի եւ պաշտամունքներուն հետ կապուած. կախարհ կին, անասունի հետ պառկող, ուրիշ աստուածներու պաշտամունք, որ երեքին ալ պարսիժը նոյնն է՝ մահապարսիժ, «չապրեցնել», «պէտք է մեռցուի» եւ «ամբողջովին կորսուի»:

Յաջորդ օրէնքը վերաբերում մըն է պանդուխտներուն- օտարականներուն- կապուած: Երկրորդ, աղքատներուն կապուած, թելադրելով որ վաշխառուի պէս փոկոս չառնեն աղքատէն: Իսկ Զրիստոս քայլ մըն ալ անդին անցնելով կ'ըսէ. «Եթէ փոխ փոխի եւ ան չի կրնար վճառել, եր մի՛ պահանջեր»:

«Օտարականը մի՛ չարչարեր ու զանիկա մի՛ նեղեր. որովհետեւ դուք ալ Եգիպտոսի մէջ օտարական էիք: Արբեւարին ու որբը բնաւ մի՛ չարչարէք: Եթէ զանոնք չարչարէք ինչ կերպով ալ ըլլայ ու անոնք ինծի բողոքելու ըլլան, անշուշտ պիտի լսեմ անոնց աղաղակը: Իմ բարկութիւնս պիտի բորբոքի ու ձեզ սրով պիտի մեռցնեմ եւ ձեր կիները որբեարի ու ձեր տղաքները որբ պիտի ըլլան» (22:21-24): Այս յայտարարութեամբ Աստուած կ'ուզէ յիշեցնել Իսրայէլացիներուն թէ ինչպիսի վերաբերմունք պէտք է ունենան օտարականին, որբեարիին ու որբին նկատմամբ, միշտ յիշելով որ իրենք ալ արեւոյտ օտարական էին: Միւս կողմէ նաեւ այս յայտարարութեամբ Աստուած ցոյց կու տայ որ Ինք ողորմած Աստուած է, որ կ'ողորմի, բայց նաեւ ի պահանջել հարկին պարտող:

«Դատարներուն մի՛ հայհոյեր, եւ քու ժողովուրդիդ իշխանը մի՛ անիծեր» (28 հմր): Եթէ դատարար բառին տեղ Աստուած անունը դնենք, որովհետեւ անոնք՝ դատարարները Աստուծոյ ներկայացուցիչներն էին: Ուրեմն դատարարին հայհոյել Աստուծոյ հայհոյել կը նշանակէր:

Այս հարցին առնչութեամբ, Աստուածաշունչը միշտ հնազանդութիւն կը թելադրէ իշխանութիւններուն հանդէպ, բայց որքանով այսօրուան մարդը կը հետեւի այդ հրահանգին: Պօղոս Առաքեալ շար լաւ գիտեր կայսրերուն եւ իշխանաւորներուն բռնապիտոյթիւնը եւ քննադատողը, եւ դիւրին չէր իրեն համար այդպիսի որոշում մը կամ պատուէր մը տալը, բայց փութ:

Միւս կողմէ, իշխանութիւնները որքանով Աստուծոյ ներկայացուցիչները կոչուելու արժանի են, այլ հարց: Մակայն, եթէ Աստուծոյ վրայ վստահութիւն ունինք եւ կը հաւատանք որ Աստուծոյ իմաստութիւնը անհամեմատելի է մարդկայինին հետ, եւ եթէ կ'ընդունինք թէ Աստուած միայն գիտէ ասպագան, այս պարագային կը հնազանդինք Անոր կամքին եւ մեր պարտաւորութիւնը կը կարարենք իշխանութիւններուն հանդէպ: Բացի մէկ պարագայէ, երբ իշխանութիւնները կը փորձեն կաշկանդել խղճի ազատութիւնը:

Ի վերջոյ, Աստուծոյ նկատմամբ ծիսական պարտաւորութիւններ, որպէս երախտագիտութեան ու շնորհակալութեան արտայայտութիւն:

Այս բոլորի նպատակը ի վերջոյ «դուք ինծի սուրբ մարդիկ պիտի ըլլաք»: